ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 674-Լ

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 473-Ա, ՄԱՅԻՍԻ 21-Ի N 488-Ա ԵՎ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 507-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ որոշում եմ.

1. Համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 16-ի N 473-Ա, մայիսի 21-ի N 488-Ա և մայիսի 26-ի N 507-Ա որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 16-ի N 473-Ա որոշման նախաբանում «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» իրավական ակտի կրճատ անվանումը փոխարինել «ՀՀ Կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» N 572-Ն որոշման» իրավական ակտի ամբողջական անվանումով:

2) Համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 21-ի N 488-Ա որոշման նախաբանում, որպես իրավական հիմք, հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին:

3) Համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 26-ի N 507-Ա որոշման նախաբանում «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի» հղումը փոխարինել ««ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներ», «ՀՀ Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման»» հղումներով, ինչպես նաև՝ համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 26-ի N 507-Ա որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «և վարձատրել Ակունք համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 88-Ա որոշմամբ հաստատված «Ակունք համայնքի մակապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակի՝ տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 26 թ. հուլիսի 10
գ. Ակունք